# Ծուշանիկ Կուրղինյան

## Գարնանամուտ

Նորից գարուն,
Կարմիր արև,
Թռչունի երգ,
Առվի խոխոջ . . .
Նորից հույսը մարդուն ընկեր
Ու պահապան:
Նորից երգը միշտ սրտահույզ
Ու խնդալից:
Նորից լուծը
Թեթև, անցավ՝
Թոթափելու մոտ ու խախուտ:
Մորմոքները մթնշաղի թևերի պես
Շուտ նոսրացող:
Կապանքները՝
Անցողական,
Ջրկանքների թիվը հաշված . . .
Որքան ծաղիկ
Պիտի բացվի . . .
Որքան ճաճանչ
Պիտի շոյե բաց դեմքերը . . .
Որքան ցնծերգ
Պիտ ոլորա կրծքերի տակ . . .
Որքան համբույր պիտի պոկվի

Շրթունքներից՝
Փորագրվի
Հուշերի մեջ . . .
Արևները սրտերի մեջ
Պիտի վառեն
Բախտի թագին,
Որ խնկարկվի կյանքն ու ապրում . . .
Գիշերների մթության մեջ
Պիտի երկնեն կոկոնները
Հազարերանգ,
Բողբոջները՝
Ցողով սնած .
Ծնվող խոտով
Պիտի լցվեն
Դաշտերն անծայր,
Թևավորող
Թռչուններով՝
Օդը հստակ
Ու բուրալի . . .
Որքան թիկունք
Պիտի ծռվի
Խոնավ հողին,
Կոշտ հանքերին,
Հնոցի դեմ,
Սալի առաջ,
Ծանրության տակ՝
Որ ապրելու խլե հնար . . .
Ժիր աղմուկը բահի, մուրճի
Եվ քլունգի,
Որքան քրտինք պիտի քամե
Ճակատներից
Արևակեզ,
Ու ողողե ողջ արդյունքը

Աշխատանքի . . .
Տրտում մտքերը գերել են ինձ,
Տխրած չէի ոչ մի գարնան:
Ու լալիս է
Անմխիթար
Սիրտս հիվանդ . . .
Որքան կսկիծ ծլեց ծաղկեց
Եվ ինձ համար . . .
Ու թույլ եմ ես,
Կընկնեմ խամրած՝
Երբ ծլում է խոտը, կանաչ,
Երբ ծաղկում են
Ծաղիկները հազարերանգ . . .

1920 թ. 3 ապրիլի

---